ԿԱՐՍԻ ՎԻՃԱԿԻ ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՄԱՌՕՏ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ.

(Ի փեղչէ յառաջաբանէ·)

Դժուարութիւնները, որոնց ենթակայ էին ուղևոր այցելուները, որովհետև կանոնաւոր և ապահով ճանապարհներ չրկային, չրկար և կեանքի ապահովութիւն ոչ միայն ուղևորին այլ և տեղացի քրիստոնեայ խաղաղ ազգաբնակութեանց, մինչև ռուսների տիրապետութիւնը արգելք էին լինում հետազօտել Արևմտեան Շիրակայ հնութիւնները։ Եւ այս իսկ պատճառով Կարսի նահանգը որի մէջ է Արևմտեան Շիրակը, ուր են Բագրատունի հարստութեան փառաւոր յիշատակարանները սակաւներին յայտնի էին. սակաւ ոմանք կարող էին մահը աչքի տակ ունենալով անց կենալ Ախուրեան գետը և տեսնել Անին, Բագրատունեաց այդ պանծալի մայրաքաղաքը, որի աւերակները մօտ հինգ հարիւր տարի բնութեան և մարդոց բռնութեանց հետ պատերազմելով, այսօր ևս հիանալի և հրապուրելի են իրանց սակաւ մնացորդներով։ Արհաւրաց ժամանակը անցաւ։ 1877 թուից սկսեալ, երկիրը բարեկարգ տէրութեան գաւառ դառնալով բացի ճանապարհների յոլովութիւնից, ստացաւ և ցանկալի խաղաղութիւն. այժմ Անին և բոլոր հնութիւնները մատչելի են ամեն մահկանացուի։

Ամեն ցանկացող այժմ կարող է ազատ համարձակ այցելել Անին և բոլոր հնութիւնները շաբաթներով մնալով նոցա մէջ և միջոց ունենալով ուսումնասիրել ամեն մի քարը. որովհետև քրիստոնեայ տէրութիւնը երկրի վերայ իւր հետ սփռել է Քրիստոսի խաղաղութիւնը և երկիրը աճում և բարգաւաճում է կենդանութեամբ և բնակութեամբ։

Կարսի նահանգի մի մասն էլ կազմւում է Արևմտեան-Շիրակը հնութիւններով հարուստ այդ դաւառը, որի մէջ են Անին,

Մրենը, Մաղասբերդը, Արգինան, Շիրակաւանը և այլ երբեմն մարդաշատ քաղաքներն ու աւանները։ Շիրակայ հնութիւնները անյայտ չեն բանասէրներին։ Բաց ի օտարազգիները հայազգի հմուտ հնասէրներ որպիսի են Հ. Ինճիճեան, Հ. Սարգսեան, Հ. Ջալալեան, Հ. Աբէլ Մխիթարեան, Հ. Ալիշան, Պ. Գեղամեանց ևլն, մանրամասնաբար նկարագրել են Շիրակայ և յատկապէս Անւոյ հնութիւնները. բայց այդ գրուածքները իրանց մանրամասնութեամբ և ընդարձակութեամբ մատչելի են սակաւ սմանց, որոնք ժամանակ և ցանկութիւն ունին օրերով ուսումնասիրել և ոչ հետաքրքրութիւն յագեցնել, և այն՝ հարևանցի։

Այս հարևանցի հետաքրքրութեան բաւականութիւն տալու համար—Արևմտեան-Շիրակին և ընդհանրապէս Կարսի վիճակին վերաբերեալը հնախօսութիւններից քաղելով կազմեցի այս համառօտութիւնը, յիշատակելով միայն հիմնարկութեան, տարին, անցեալը և ներկան համառօտ և շատ համառօտ. որպէս զի հնար լինի մի ամփոփ տեղեկութիւն ունենալ թէ որն է հնութիւն որ թուից է, ինչ գլխաւոր արկածներ է ունեցել և ինչ դրութեան մէջ է այժմ։

Եւ որովհետև Արևմտեան Շիրակայ հնութիւնների պսակն է Անին, ուստի և սկսենք Անիից,

(Շարունակելի) ՅՈՒՍԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՄՈՎՍԷՍԵԱՆ.

ԱԶԳԱՅԻՆ

Խմբագրութեան Արարատ ամսագրոյ.

Հոգաբարձութիւնն այսու խնդրում է Խմբագրութիւնից թոյլ տալու Արարատի միջոցաւ յայտնելու իւր խորին շնորհակալութիւնն այն բոլոր անձանց, որոնք Դպրանոցի յիսնամեակի առթիւ կատարուած ուսումնական հանդիսին մասնակցած են հեռագրով կամ նամակով և որոնք ըստ կարի նպաստած են Դպրանոցի աղքատ գանձարանին.

Նոցա անուանական ցուցակը կցում է ահա այս գրութեան հետ առանձին թերթի վերայ.